



Քրոնիկոն

2

ԱԲՍ միացյալ հեռախոսահամար՝ 1-1-01



Պորտ Ռոյալի կործանումը

5



Եկեք բարի լինենք

6



Թերարժեքություն՞, թե՞ գեղեցկության ձգտում

7

ISSN 1829-149X



10039

9 771829 149003

արտակարգ թերթ

N 39 (360)

12.11.2010 - 18.11.2010

www.emergency.am

Ազնիվ եւ անկաշառ աշխատանքի պահանջ ԱԻ նախարարի հրավիրած խորհրդակցությունը

Նոյեմբերի 9-ին ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի մոտ տեղի ունեցավ խորհրդակցություն, որը նվիրված էր պետական հրդեհային տեսչության գործունեությանը՝ նրանում տեղ գտած թերությունները, բացթողումներն ու հայտնաբերված անօրինական երեւոյթները բացառելու հետ կապված խնդիրներին:

ԱԻ նախարար Ա.Երիցյանը ողջունեց խորհրդակցության մասնակիցներին, նրանց տեղեկացրեց կատարված կադրային փոփոխությունների մասին եւ ներկայացրեց պետական հրդեհային տեսչության նոր պետին՝ Ա. Մկրտչյանին:

Նախարարն իր ելույթում նշեց, որ Արտակարգ իրավիճակների նախարարությունն արդեն իսկ կայացած եւ հզորացած մի կուռ կառույց է, որի ներկա ձեռքբերումներն զգալի են: Նա ասաց նաեւ, որ Վերահսկիչ պալատը տեղեկանք է ներկա-

յացրել պետական հրդեհային տեսչությունում կատարված ստուգումների, ուսումնասիրությունների ու հայտնաբերված թերությունների, բացթողումների վերաբերյալ, որոնք անհապաղ վերացման են շտկման կարիք ունեն: Բացի դրանից, դրամաշրջության խնդիրն այսօր Հայաստանի Հանրապետության նախագահի ուշադրության կենտրոնում է, եւ հրդեհային տեսչությունում տիրող իրավիճակն անհանգստացնող է: Նա անդրադարձավ տեսչության աշխատանքներում տիրող իրավիճակին, որոշ տեսչիկների կողմից կատարվող անօրինական, ապօրինի գործողություններին՝ կապված դրամաշրջությունների դեպքերի հետ: Նախարարը շեշտեց, որ թերություններն ու բացթողումներն անթույլատրելի են եւ դրանք պետք է իսպառ վերացվեն:

Նիստի ընթացքում համձնարարվեց խստագույնս հետեւել

հրդեհային տեսչության կողմից ողջ հանրապետությունում իրականացվող գործողություններին՝ բացառելու համար անօրինական երեւոյթները, տեսչության աշխատակիցների կողմից կատարված անօրինական գործողությունների բացահայտման, նման երեւոյթների վերաբերյալ տեղեկություններ ստանալու, հայտնաբերելու դեպքում ներկայացնել առաջարկներ՝ օրենքի սահմաններում պատժամիջոցներ կիրառելու՝ ընդհուպ մինչեւ համակարգից հեռացնելու, քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: ԱԻ նախարարը պատասխանատվության ենթարկելու մասին: ԱԻ նախարարը կարգադրեց նաեւ, որ տեսչության աշխատակիցները հաճախակի լինեն դպ-



րոցներում, մանկապարտեզներում, ուսումնական ու դաստիարակչական հիմնարկներում ու կազմակերպություններում՝ ուսուցանեն, աջակցեն, օգտակար լինեն հակահրդեհային անվտանգության պահանջների կատարմանը: Ավարտելով նիստը՝ նախարարը մեկ անգամ եւս անդրադարձավ ազնիվ եւ անկաշառ աշխատելու կարեւորությանը, եւ նշեց, որ նման աշխատակիցների հետ են գնալու առաջ: Իսկ նրանք ովքեր զգում են, որ չեն կարող կատարել իրենց առջեւ դրված խնդիրները, տեղ չունեն ԱԻ նախարարում:

Ավարտելով նիստը՝ նախարարը մեկ անգամ եւս անդրադարձավ ազնիվ եւ անկաշառ աշխատելու կարեւորությանը, եւ նշեց, որ նման աշխատակիցների հետ են գնալու առաջ: Իսկ նրանք ովքեր զգում են, որ չեն կարող կատարել իրենց առջեւ դրված խնդիրները, տեղ չունեն ԱԻ նախարարում:

Կայուն զարգացում. աղետների վրանգի նվազեցման միջազգային ռազմավարության իրականացումը



Սկիզբը նախորդ համարներում (Գլխավոր քարտուղարի գեկույցից)

13. «Աղետների վտանգի նվազեցման վերաբերյալ գլոբալ վերլուծական գեկույցի» նախապատրաստման ժամանակ Ռազմավարության քարտուղարությունը շարունակում է հիմնվել այն փորձի ու արդյունքների վրա, որոնք ստացվել են Միջազգային ռազմավարության իրա-

կանացմանը մասնակցող կազմակերպությունների առավել լայն ցանցի շրջանակներում: Ձեկույցը կարողացավ դառնալ խոցելիության տեսակետից առկա վտանգավոր ու անբարենպաստ գործոններին ու միտումներին վերաբերող վերլուծական ինֆորմացիայի գլխավոր միջազգային աղբյուր, որից պարզ երևում է նաեւ աղետների վտանգի նվազեցման գործում նկատվող առաջընթացը: Ամեն ամիս «PreventionWeb» ինտերնետային կայքից ներբեռնվում

են 2009 թվականի «Գլոբալ վերլուծական գեկույցի» ավելի քան 12 000 գլուխ՝ բոլոր չորս լեզուներով:

14. «Գլոբալ վերլուծական գեկույցը», որը կիրառարակվի 2011 թվականին, միջազգային հանրության ու կառավարությունների համար կծառայի իբրեւ ամբողջ աշխարհում առկա աղետների վտանգավոր գործոնների հետ կապված առավել որակյալ տվյալների ու խոր վերլուծությունների աղբյուր, իսկ հատկապես կառավարությունների համար՝ ռազմավարական քաղաքականության ձեւավորման ու մշակման հիմք, ինչը թույլ կտա ունենալու նաեւ համապատասխան ուղեցույց, ըստ որի կբացահայտվեն Հյուսիսի շրջանակային ծրագրի արագացված տեմպերով իրականացման հնարավորությունները, առանց վնաս հասցնելու Հազարամյակի հռչակագրում ամրագրված նպատակներին ծառայող զարգացման ու ֆինանսական ներդրումների բնագավառում արդեն իսկ ձեռք բերված հաջողություններին:

>>> 4

«Էլիտ Գրուպ». կյանքի նոր որակ



Սեյսմակայուն
Էլիտար
շինարարության
առաջատարը
տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երևան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



քրոնիկոն



ԱԻՆ

միացյալ հեռախոսահամարն է
1-01

Ավտոպատահար

Նոյեմբերի 5-ին՝ ժամը 19:12-ին տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 107-րդ կմ-ում (Աղավանձոր գյուղի մոտ) ավտոմեքենա է շրջվել, կան տուժածներ եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել Վայոց ձորի ՄՓՎ ՓՋ-ն:

Դեռեւս չպարզված համաձայնագրերում ճանապարհի երթուղիների մասում շրջվել է «ՈՒՎՁ» մակնիշի 67 LS 232 պ/հ ավտոմեքենան: Փրկարարների ուժերով ավտոմեքենայից դուրս են բերվել 4 ուղևորներ: ՃՏՊ-ի հետեւանքով ավտոմեքենայի վարորդ Աղասի Գալստյանը ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել Եղեգնաձոր քաղաքի հիվանդանոց:

Տուժածի առողջական վիճակը բժիշկների կողմից գնահատվել է բավարար:

Նոյեմբերի 6-ին՝ ժամը 16:52-ին ահազանգ է ստացվել այն մասին, որ ժամը 16:49-ին Կաթնաղբյուր գյուղի սկզբնամասում տեղի է ունեցել ավտոպատահար, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Դեռեւս չպարզված համաձայնագրերում «ԳԱԶ-24» մակնիշի 14ՍՍ199 պ/հ ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղիների մասին եւ շրջվել:

Փրկարարների ուժերով ավտոմեքենա-

յից դուր են բերվել վարորդ Աշոտ Նազարյանը (ծնվ. 1990 թ.), որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Ստեփանավան քաղաքի հիվանդանոց եւ ուղևոր Համայնակ Նազարյանը (ծնվ. 1964 թ.):

Ըստ հիվանդանոցի բժիշկ Պապյանի՝ Ա. Նազարյանի առողջական վիճակը գնահատվում է միջին ծանրությամբ:

Թունավորում

Նոյեմբերի 10-ին՝ ժամը 20:15-ին տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ ժամը 18:27-ին բոտոլիզմի թունավորումով Վանաձոր քաղաքի թիվ 2 հիվանդանոց է տեղափոխվել Վանաձոր քաղաքի բնակիչ Արմեն Շահինյանը (ծնվ. 1992 թ.):

Ժամը 20:05-ին Ա. Շահինյանը տեղափոխվել է Վանաձոր քաղաքի թիվ 1 հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունք:

Ըստ հերթապահ բժիշկ Մարտիրոսյանի՝ Ա. Շահինյանի առողջական վիճակը ծայրահեղ ծանր է:

Նոյեմբերի 10-ին՝ ժամը 07:45-ին տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ Կոհոլային թունավորումով Ապարան քաղաքի հիվանդանոց է տեղափոխվել Վարդենիս գյուղի բնակիչ Լեռնիկ Նազարեթյանը (ծնվ. 1968 թ.):

Ըստ հերթապահ բժիշկի՝ Լ.Նազարեթյանի առողջական վիճակը բավարար է:

Հրդեհներ

Նոյեմբերի 5-ին՝ ժամը 12:25-ին ահազանգ է ստացվել այն մասին, որ հրդեհ է բռնկվել Ստեփանավան քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի զինվորական ավանում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 12:35-ին, մարվել՝ ժամը 13:00-ին:

Ձիմվորական ավանի հարակից տարածքում այրվել է վազոն-տնակի հատակը՝ 5 մ:

Նոյեմբերի 5-ին՝ ժամը 12:30-ին տեղեկություն է ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Սարի քաղի 18-րդ փողոցի թիվ 61 տան մոտ եւ հարակից ճանապարհին առաջացել է գրունտի նստվածք (համապատասխանաբար՝ մոտ 7-8 քմ մակերեսով, 2-3 մետր խորությամբ եւ 2-3 քմ մակերեսով, 0,5 մ խորությամբ):

Դեպքի վայր են մեկնել ԱԻՆ եւ քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի

մասնագետներ: Կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ:

Նոյեմբերի 5-ին՝ ժամը 15:52-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Նոյեմբերյան փողոցի թիվ 140 տանը:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 16:07-ին, մարվել՝ ժամը 16:14-ին:

Ֆրոնզեի փողոցի թիվ 167 տանն այրվել է բազմոց:

Նոյեմբերի 5-ին՝ ժամը 21:21-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Աթոյան փողոցի անցուղու թիվ 11 շենքի հարակից չգործող կաթսայատանը: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 21:48-ին, մարվել՝ ժամը 22:08-ին:

Այրվել է աղբ՝ 25 մք:

Նոյեմբերի 6-ին՝ ժամը 08:29-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Օրբելի փողոցի թիվ 4 շենքի հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մարվել է ժամը 08:43-ին:

Էլ.սյան վրա այրվել է 10 մ մալուխ:

Նոյեմբերի 6-ին՝ ժամը 09:25-ին տեղեկատվություն է ստացվել այն մասին, որ ժամը 07:15-ին հրդեհ է բռնկվել Եղվարդ քաղաքի Գագարինի փողոցի թիվ 20 հասցեում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 07:47-ին, մարվել՝ ժամը 08:38-ին:

Այրվել է Մ.Կարապետյանի պատկանող կիսակառույց շինության մեջ պահեստավորված 3 տ անասնակեր:

Նոյեմբերի 6-ին՝ ժամը 14:37-ին հրդեհ է բռնկվել Հրազդան-Հանքավան ավտոճանապարհի 35-րդ կմ-ի հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 15:58-ին, մարվել՝ ժամը 18:12-ին:

Այրվել է 15 հա խոտածածկ տարածք:

Նոյեմբերի 6-ին՝ ժամը 15:30-ին հրդեհ է բռնկվել Սարչապետ գյուղի հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժամը 15:58-ին:

Հրդեհը մարվել է գյուղի բնակիչների ուժերով:

Այրվել է 40 հա խոտածածկ տարածք:

Նոյեմբերի 7-ին՝ ժամը 01:52-ին հրդեհ է բռնկվել Քաջարան քաղաքում՝ Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի դարբնոցային արտադրամասի հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 02:03-ին, մարվել՝ ժամը 02:10-ին:

Այրվել է 10 քմ աղբ եւ արտադրական քափոն:

Նոյեմբերի 7-ին՝ ժամը 08:11-ին ահազանգ է ստացվել այն մասին, որ Սեւան-Երեւան ավտոճանապարհի 30-րդ կմ-ում տեղի է ունեցել ՃՏՊ:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Դեռեւս չպարզված համաձայնագրերում «ԲՍՎ-320» մակնիշի 10 SS 754 պ/հ ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթուղիների հատվածից եւ բախվել ճամփեզրի ծառին:

Հրշեջ-փրկարարները ավտոմեքենայից դուրս են բերել մեկ քաղաքացու եւ հանձնել «1-03» ծառայության աշխատակիցներին (մինչև հրշեջ-փրկարարների կանչի վայր հասնելը եւս երեք տուժածներ արդեն տեղափոխված են եղել):

ՃՏՊ-ի հետեւանքով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով Չարենցավան քաղաքի հիվանդանոց են հոսպիտալացվել վարորդ Էդգար Առաքելյանը (ծնվ. 1989 թ.), ուղևորներ Արմեն Մելքոնյանը (ծնվ. 1987 թ.), Ալվարդ Սեդրակյանը (ծնվ. 1995 թ.) եւ Ժորա Գովակյանը (ծնվ. 1990 թ.):

Բժիշկների կողմից վարորդի առողջական վիճակը գնահատվել է ծանր, իսկ ուղևորներինը՝ միջին ծանրության: >>>

միջազգային լուրեր

Խոսում էր բջջայինով

Առնվազն 8 մարդ զոհվել է 41-ը վիրավորվել են Ալբանիայում ավտոբուսի վթարի հետեւանքով: Հունական տրանսպորտային ըն-



կերության Տիրանա-Աթենք ուղևորների ավտոբուսը կործանվել է Ալբանիայի հարավում՝ Հունաստանի սահմանից 85 կմ հեռավորության վրա:

Ուժեղ անձրեւի պայմաններում վարորդը կորցրել է ավտոբուսի

կառավարումը, եւ մեքենան ընկել է 100-մետրանոց անդունդը:

Ավտոբուսում 49 ուղևոր է եղել: Ողջ մնացած ուղևորները հայտարարել են, որ վարորդն անզգույշ է եղել ճանապարհին եւ խոսել է բջջային հեռախոսով:

Վարորդը, որը լուրջ վնասվածքներ չի ստացել, հարցաքննվում է ոստիկանության կողմից:

Չկացքների բախում

Լեհաստանի հյուսիս-արեւելքում իրար է բախվել երկու ապրանքատար գնացք, ինչի հետեւանքով ցրտերններ են պայթել եւ հրդեհ է բռնկվել:

Սխալմամբ կան երկաթգծերի տեխնիկական անսարքության պատճառով երկու գնացքները հայտնվել են միեւնոյն գծի վրա:

Գնացքներից մեկը մխրձվել է մյուսի մեջ, որը դիզելային վառելիքի ցիստերններ էր տեղափոխում:

Դեպքի վայր է ժամանել 30 հրշեջ-հաշվարկ: Տարհանվել են հարակից շենքերի բնակիչները: Հրդեհի հետեւանքով տուժել է երկու մարդ:

Հրդեհ հիվանդանոցում

Սուխումիի քաղաքային հիվանդանոցում բռնկված հրդեհի հետեւանքով զոհվել է երեք մարդ:

Աբխազիայի արտակարգ իրավիճակների վարչության տվյալներով՝ նոյեմբերի 9-ի երեկոյան հրդեհվել է հիվանդանոցի ուրուղիական բաժանմունքը: Մահացածների թվում են հիվանդներից մեկը,

նրան խնամող կինը եւ բուժքույրը: Շենքում գտնվող մյուս մարդկանց հաջողվել է տարհանել:

Հրդեհի բռնկման պատճառները դեռ անհայտ են: Հարուցվել է քրեական գործ:

Մտացել էր երթուղին

Բրիտանական ոստիկանությունը ձերբակալել է Դելտա ավիաընկերությանը պատկանող ամերիկյան Բոինգ-757 օդանավի օդաչուին, որը մտադիր է եղել կառավարել օդանավը հարթած վիճակում եւ չի ինացել՝ ուր է թռչելու: 213 ուղևորներով օդանավը Լոնդոնի Հիթոու օդանավակայանից պետք է թռչեր Դեթրոյթ, սակայն 48-ամյա օդաչուն ենթադրել է, որ վերջնակետը Նյու Յորքն է:

Ձերբակալված օդաչուի արյան մեջ ալկոհոլի բաղադրությունը 5 անգամ գերազանցել է նորման: Նոյեմբերի 16-ին նրան վիճակված է կանգնել դատարանի առջեւ:

Փոթորիկ Հայիթում

Հայիթում «Թոմաս» փոթորիկը առնվազն 6 մարդու կյանք է խլել: Այն նաեւ ցրիեղեղ է առաջացրել երկրի արեւմտյան հատվածում, որտեղ տեղակայված են 2010 թ. սկզբին տեղի ունեցած երկրաշարժից տուժածների վրանային ճամբարները:



Փոթորիկ կենտրոնում քանու արագությունը հասել է 135 կմ/ժ-ի: «Թոմաս»-ից տուժել է նաեւ մայրաքաղաք Պորտ-օ-Պրենսը: Քաղաքի փողոցները վերածվել են գետերի:

Ֆախնա Թյունիբաբյան



<<< * * *

Նոյեմբերի 7-ին՝ ժամը 10:45-ին ահազանգ է ստացվել այն մասին, որ հրդեհ է բռնկվել մարզի Ներքին Դվին գյուղի Բաղրամյան փողոցի թիվ 7 տանը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, որը կանչի վայր է հասել ժամը 11:00-ին:

Հրդեհը մարվել է տեղի ուժերով: Այրվել է Ռ. Յոնանովային պատկանող տան փայտյա առաստաղը՝ 1 քմ:

* * *

Նոյեմբերի 7-ին՝ ժամը 12:24-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Թումանյան փողոցի 1-ին անցուղու թիվ 2 շենքի վերելակի հորանում:

Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 12:37-ին, մարվել՝ ժամը 13:19-ին:

Այրվել են 6 քմ աղբ եւ էլ.մալուխներ:

* * *

Նոյեմբերի 8-ին՝ ժամը 20:00-ին ահազանգ է ստացվել, որ Վանաձոր քաղաքի մերձակայքում՝ բարձր լեռների տարբեր հատվածներում նկատվում են հրդեհի օջախներ:

Վանաձոր քաղաքի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրինությունից ճշտվել է, որ հրդեհները վտանգ չեն սպառնում անտառային հատվածին, օջախներին մոտենալ եւ հրդեհաշիջում իրականացնել հնարավոր չէ:

Մինչեւ ժամը 23:50-ը Վանաձոր քաղաքի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից իրականացվել է հերթապահություն:

Ժամը 01:00-ի սահմաններում հրդեհն ինքնամարվել է:

Անվտանգ տեղական համայնքներ

EUROPEAN COMMISSION



Humanitarian Aid

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ) Արտակարգ իրավիճակների, Կրթության եւ գիտության նախարարությունների հետ համատեղ՝ վերահասնաժողովի մարդասիրական օգնությունների բաժնի ֆինանսավոր-

բաժանվում են հետեւյալ 4 ուղղությունների՝

1. համայնքների կարողությունների զարգացում,
2. բնակչության իրազեկման բարձրացում՝ դպրոցներում աղետների նախապատրաստման ուսումնական ծրագրերի միջոցով,
3. աղետների կառավարման ոլորտում մարզային համակարգման հզորացում,
4. Հարավային Կովկասում աղետների կառավարման ոլորտում համագործակցության հզորացում:

Ծրագրի առաջին ուղղության շրջանակներում շահառու համայնքներում ձեւավորվեցին 9

«Փրկարարության հիմունքներ եւ առաջին օգնություն» 2 օր տեւողությամբ տեսական եւ գործնական դասընթացները:

Որպես դասընթացների ավարտական փուլ՝ կազմակերպվեցին ուսումնական խաղ-վարժանքներ բոլոր թիրախային 9 համայնքներում ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Շիրակի մարզային փրկարարական վարչության եւ «ԼՈՒՆԷ» փրկարարական ջոկատ ՀԿ-ի հետ համատեղ: Ավելին՝ յուրաքանչյուր ՀԿ-ին տրվեցին փրկարարական գույք (սաղավարտ, կացին, բախ, բարձրախոս եւ այլն) ու հանդերձանք (բաճկոն, տաբատ, ժիլետ եւ այլն) առաջնային արձագանքման աշխատանքներ իրականացնելու համար:

Խաղ-վարժանքներին, որպես հանդիսատես, ներկա էին դպրոցների բարձր դասարանցիները: Վարժանքներն անցկացվեցին 3 փուլով. գետնացում եւ տուժածին առաջին օգնության ցուցաբերում, տուժածին փլատակներից դուրս բերում եւ առաջին օգնության ցուցաբերում եւ թեթ:

Առաջին եւ երկրորդ փուլերի ժամանակ մասնակիցները գործնականորեն կիրառեցին աղետներին արձագանքման եւ առաջին օգնության վերաբերյալ ստացած գիտելիքները: Այս, որպես խաղ-վարժանքի ավարտական փուլ, մասնակիցները պատասխանեցին թեսթային հարցերին, որոնց միջոցով եւս մեկ անգամ ստուգվեցին դասընթացների ժամանակ ԱՌԿ ուղղությամբ նրանց ստացած գիտելիքները:

Ուսումնական խաղ-վարժանքի օգնությամբ ՀԿ-երը ձեռք բերեցին գործնական հմտություններ եւ ամրապնդեցին ստացած գիտելիքները: Դպրոցների բարձր դասարանցիների ներգրավումը վարժանքներին նպատակ ուներ նրանց ներկայացնելու աղետներին նախապատրաստվելու կարողությունը եւ անհրաժեշտությունը, ինչպես նաեւ՝ նրանց մեջ կամավորության ոգի սերմանելու: Վարժանքներին ներկա էին նաեւ համայնքների բնակիչները, որոնք ոգեւորությամբ եւ պատրաստակամությամբ հետեւում էին վարժանքի ամբողջ ընթացքին:



մամբ իրականացնում է «Կառուցել անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագիրը:

Ծրագրի անցկացման համար, որպես թիրախային մարզ, ընտրվել էր Շիրակի մարզը, որտեղ բնակվում է 285 867 մարդ: Շիրակի մարզից ընտրվել են Ազատան, Անուշավան, Առափի, Բենիամին, Նոր Կյանք, Մեծ Մանթաշ, Սառնաղբյուր, Փանիկ եւ Պեմզաշեն գյուղական համայնքներն ու 32 դպրոց: Այսպիսով, ծրագրում ընդգրկված շահառուների թվում են 14 963 դպրոցականներ եւ նրանց հարազատները՝ մոտ 44 900 մարդ, ինչպես նաեւ 9 համայնքներից 24 965 բնակիչ:

Ծրագրի գործողությունները

Համայնքային թիմեր (ՀԹ), որոնց կազմում ընդգրկված են 180 անդամներ: ՀԹ-երը բնակչության պաշտպանության գործում տեղական կարողություն եւ գործիք են հանդիսանում: Ավելին՝ նրանք նպաստելու են նաեւ աղետների ռիսկի նվազեցման համայնքակենտրոն ծրագրերի իրականացմանը:

ՀԹ-ին Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտի վերաբերյալ համապատասխան գիտելիքներ տրամադրելու եւ նրանց պատրաստվածության բարձր մակարդակն ապահովելու համար ՀԿԽԸ-ն կազմակերպեց «Աղետների ռիսկի կառավարման հիմունքներ» 2 օր տեւողությամբ, «Մարդասիրական օգնության տրամադրում» 1 օր տեւողությամբ,

սեյսմիկ պաշտպանություն

Նոյեմբերի 4-ից 10-ն ընկած ժամանակահատվածում ՄՊԱԾ-ի դիտացանցի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում չի գրանցվել 3 եւ ավելի բալ ուժգնությամբ երկրաշարժ: Այդ ուժգնության 11 սեյսմիկ իրադարձություն տեղի է ունեցել ՀՀ հարակից տարածքներում:

Տարածաշրջանում. նոյեմբերի 6-ին Իրան-Թուրքիա սահմանային գոտում՝ Մակու (Իրան) քաղաքից 42 կմ հարավ-արեւմուտք, գրանցված երկրաշարժի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 5 բալ: Այդ ստորգետնյա ցնցումը տեղաբնակների մոտ խուճապ է առաջացրել, մոտավորապես 100 մարդ է տուժել, որից 25-ը հոսպիտալացվել է: Երկրաշարժին նախորդել է 3 բալ ուժգնությամբ մեկ նախացնցում եւ հաջորդել 3-4 բալ ուժգնությամբ հինգ

հետցնցում: Նույն օրը Ռուսաստանի տարածքում, Չեչնիայի Գուդերմես քաղաքից 20 կմ հյուսիս-արեւելք, տեղի է ունեցել 5-6 բալ ուժգնությամբ երկրաշարժ, որը զգացվել է Չեչնիայի հարավ-արեւելյան մասում: Այդ օրը 3 բալանոց սեյսմիկ ցնցում է գրանցվել Վրաստանի Ռուսթավի քաղաքից 26 կմ հյուսիս-արեւելք: Նոյեմբերի 8-ին նույն ուժգնությամբ թույլ երկրաշարժ է տեղի ունեցել Իրանում՝ խոջ քաղաքից 24 կմ հարավ-արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով մեկ երկրաշարժ է տեղի ունեցել նոյեմբերի 10-ին՝ Խաղաղ օվկիանոսի հարավում գտնվող էպիկենտրոնով, եւ ունեցել է 6.3 մագնիտուդ:

ՄՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Նոյեմբերի 4-ից 11-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Նոյեմբերի 4-ից 11-ը դիտվել է առանց տեղումների եղանակ: Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Սյունիքի հովիտներում՝ +23... +25 °C, Տավուշում, Լոռիում եւ Արցախում՝ +20... +22 °C, Սյունիքի հովիտներում՝ +22... +24 °C, Սյունիքի նախալեռներում եւ Արարատյան դաշտում՝ +18... +20 °C, Արագածոտնի նախալեռներում՝ +15... +18

°C, լեռնային շրջաններում՝ +10... +15 °C:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -5... -10 °C, Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշում եւ Սյունիքի նախալեռներում՝ -4... +1 °C, Լոռիում՝ -4... -6 °C (Տաշիրում՝ -12 °C), Սյունիքի հովիտներում եւ Արցախում՝ +2... +4 °C:



Առաջիկա 5 օրվա եղանակի կանխադեսում

Հանրապետության տարածքում նոյեմբերի 11-ից 16-ը սպասվում է առանց տեղումների եղանակ: Քամին՝ հարավ-արեւելյան՝ 3-8 մ/վրկ: Օդի ջերմաստիճանն էական չի փոխվի:

Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 12-ի գիշերը լեռնային շրջաններում սպասվում է -4... +1 °C, Լոռիում՝ -4... +1 °C, Տավուշում՝ +5... +10 °C, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +2... +6 °C, Արարատյան դաշտում՝ -1... +2 °C, Սյունիքի հովիտներում՝ +5... +10 °C, Սյունիքի նախալեռներում՝ -2... +3 °C, Արցախում՝ +7... +11 °C:

Օդի ջերմաստիճանը 12-ի ցե-

րեկը լեռնային շրջաններում՝ +10... +15 °C, Լոռիում՝ +18... +22 °C, Տավուշում՝ 20... +24 °C, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +17... +20 °C, Արարատյան դաշտում՝ +17... +20 °C, Սյունիքի հովիտներում՝ +23... +26 °C, Սյունիքի նախալեռներում՝ +16... +20 °C, Արցախում՝ +20... +23 °C:

Երեւանում նոյեմբերի 11-ից 16-ը սպասվում է առանց տեղումների եղանակ:

Օդի ջերմաստիճանը նոյեմբերի 12-ի գիշերը ցածրադիր շրջաններում կտատանվի -1... +1, բարձրադիր շրջաններում՝ +5... +7, ցերեկը՝ +18... +20 աստիճանի սահմաններում:



մասնագետի անկյուն

Կայուն զարգացում. աղետների վրանգի նվազեցման միջազգային ռազմավարության իրականացումը

<<< 1 Այժմյան հիմնախնդիրները, հնարավորությունները և հետագա գործունեության բնագավառները

15. Դժգոյի գործողությունների շրջանակային ծրագրի իրականացման գործում ամենալուրջ հիմնախնդիրներից մեկը անբարենպաստ դրության մեջ գտնվող համայնքների ընդգրկումն ապահովելն է: Թեպետ քաղաքական նակարդակում հաջողվեց հասնել զգալի առաջընթացի համաշխարհային մասշտաբով, սակայն տարածաշրջաններում և երկրներում, տեղերում առաջընթացի արդյունքներն առայժմ չեն զգացվում: Դա հատկապես վերաբերում է ռեսուրսների բաշխմանը: Մեծ մասամբ հիմնական ուշադրությունը դարձվում է ազգային նակարդակով գործունեությանը, այն դեպքում, երբ խոցելի համայնքներին տրվում են սահմանափակ ռեսուրսներ և հնարավորություններ, չնայած այն հանգամանքին, որ հաճախ հենց նրանք են ունենում լուրջ դրդապատճառներ ու ներուժ, որոնք անհրաժեշտ են ռիսկերի կառավարման և աղետների վտանգի նվազեցման համար:

16. Քանի որ Դժգոյի գործողությունների շրջանակային ծրագրում տեսանելիորեն արտացոլվում են կառավարությունների ու միջազգային կազմակերպությունների գործունեության խոր արձատարվող ստանդարտ ձեռնարկումները, ծրագիրն ինքը նույնպես, իբրև կանոն, իրականացվում է կենտրոնացված կարգով «վերելից ներքև» սկզբունքով: Բազում նախաձեռնությունների և բազում սուբյեկտների շրջանակներում գործունեությունը հետևողականորեն իրականացվում է «ներքեից վերև» սկզբունքով, ինչը

հատկապես բնորոշ է ոչ կառավարական կազմակերպություններին, Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի համայնքների ու հասարակությունների բազայով կազմակերպություններին, որոնք հանդես են գալիս հանուն համայնքների նակարդակով անվտանգության աստիճանի բարձրացման և հակազդեցության առավել արդյունավետ միջոցառումների իրականացման: Այնուհանդերձ, այդ կազմակերպությունների և բնակչության խոցե-

ների վտանգի նվազեցման անմիջական հանգուցումը զարգացման պլաններին և հաշվետվության ենթակայության մեխանիզմներին: Իսկ կառավարություններն իրենք պետք է համապատասխան գործունեության իրականացման պատասխանատվություն վերցնեն և քաղաքական նվիրվածություն դրսևորեն այդ կուրսի հանդեպ:

18. Սպասվում է, որ զարգացման նպատակներով (ներառյալ հիվանդանոցների և դպրոցների

րում գոհվում են ինչպես հիվանդները, այնպես էլ այդ հաստատությունների աշխատակիցները, և հետագայում էլ կենսականորեն անհրաժեշտ բժշկական օգնության ցուցաբերումը դառնում է անհնար: Կենսագործունեության տարբեր բնագավառներում աղետների հանդեպ կայունության աստիճանի բարձրացումը կարող է նպաստել հազարամյակի Ռեչակագրում ձեռնարկված զարգացման ոլորտի նպատակների արագացված տեմպերով իրականացմանը:

19. Եւս մեկ լրջագույն հիմնախնդիր է դեռևս հանդիսանում աղետների վտանգի նվազեցման նպատակներով իրականացվող գործունեությանն ուղղված միջոցների ինվեստիցիան: Երկրների տնտեսական առաջընթաց զարգացման և տարբեր աղետների հանդեպ նրանց կայունության համար անհրաժեշտ է առավել հիմնավոր կերպով շաղկապել համապատասխան միջոցառումները և ֆինանսավորումն այն գործունեության, որն ուղղված է կլիմայի փոփոխության հանդեպ հարմարվողականության ձեռնարկմանը: Առավելագույն կենսականության ապահովումը աղետների վտանգի նվազեցման ճանապարհով ստեղծում է կլիմայի փոփոխություններին հարմարվելու կոնկրետ հնարավորություններ, որոնք կարող էին առավել հստակ արտացոլվել նույն նպատակով արվող ներդրումների մեխանիզմներում: Որոշ երկրներին, օրինակ Դժգոյի կաստանին, Մալդիվյան Կղզիներին, Պերուին և Սենեգալին, հաջողվել է այդ բնագավառում հասնել նշանակալի առաջընթացի:

20. Գործողությունների Գլոբալ պլանի 2009 թվականի նստաշրջանի ընթացքում հնչած կոչերը, որոնք վերաբերում էին

աղետների վտանգի նվազեցմանն ուղղված գործողությունները ֆինանսավորելու նպատակով լրացուցիչ հսկիչ ցուցանիշներ ստեղծելուն, նոր խթան հանդիսացան այն պետությունների համար, որոնք ձգտում են սեփական երկրներում դրան նպաստող քաղաքական իրադրություն ստեղծել: Կոչերն առ այն, որ հարկավոր է բացի հաստատված նպատակային ցուցանիշից՝ 10 տոկոսն այն միջոցների, որոնք նախատեսված են մարդասիրական օգնությունների համար, աղետների վտանգի նվազեցման հատկացնել 1 տոկոսն այն միջոցների, որոնք ըստ ազգային բյուջեների ուղղված են զարգացման նպատակներին (ազգային և արտասահմանյան ինվեստիցիաներ) և 10 տոկոսն այն միջոցների, որոնք ուղղված են վերականգնման ու զարգացման միջոցառումները ֆինանսավորելուն, պետությունների համար կարելի է խթանիչ գործոններ հանդիսացան:

21. Ասվածի օրինակը կարող են լինել Եվրոպական միությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Ֆինլանդիան: Եվրոպական միությունը արդեն հաստատել է աղետների վտանգի նվազեցման երկու ռազմավարություն (մեկը նշակվել է զարգացող երկրների համար, մյուսը՝ իր կազմի մեջ մտնող պետությունների) և մոտակա ժամանակներում կիրառարակի դրանցից առաջինի իրականացման պլանը: Եւս մեկ ռազմավարություն էլ նշակվել է ԱՄՆ կառավարության կողմից՝ աղետների դեպքում արտասահմանյան պետություններին ցուցաբերվող օգնության Վարչության միջոցով:

Շարունակելի



լի խմբերի, որոնց այդ կազմակերպությունները ներկայացնում են, հնարավորությունները դեռևս սահմանափակ են:

17. Ընդհանրապես և ամբողջությամբ առած, անհրաժեշտ է հասնել էականորեն ավելիին, այն բանի համար, որ աղետների վտանգի նվազեցման գործունեությունն ընկալվի որպես պարտավորություն: Բազում կառավարություններ և ոչ կառավարական կազմակերպություններ դեռևս, ինչպես նախկինում, առաջին հերթին զբաղվում են աղետների հետևանքների վերացմամբ, այն դեպքում, երբ անհրաժեշտ է ապահովել աղետ-

չինարարությունը) կատարվող ինվեստիցիաների ծավալը կմեծանա ըստ երկրների կողմից ջանքերի ակտիվացման, ինչն ուղղված կլինի հազարամյակի Ռեչակագրի ձեռնարկված նպատակների իրականացմանը՝ մինչև 2015 թվականը: Եթե այդպիսի ներդրումներն իրականացվեն առանց ռիսկի գործոնները հաշվի առնելու, ապա դա ենթադրաբար կարող է սպառնալ միլիոնավոր մարդկանց կյանքին: Այսպես, օրինակ երկրաշարժերի ժամանակ մարդկանց մեծ մասը մահանում է դպրոցական շենքերի փլատակներում, կործանված բժշկական հաստատություններ

Շնորհավորանք



Տաշիրի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատար, փոխգնդապետ Գառնիկ Ազատի Գալստյանը 55 տարեկան է:

Ծնվել է 1955 թ. նոյեմբերի 11-ին՝ Ստեփանավան քաղաքում: 1976 թ. ավարտել է Երևանի հիդրոմետեորատիվ տեխնիկումը: 1976-78 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1976 թ. անցել է ծառայության ներքին գործերի համակարգում՝ նշանակվելով տեսուչի պաշտոնին: Մինչև 2002 թ. տարբեր պաշտոններ է զբաղեցրել ներքին գործերի համակարգում:

2003 թ. նշանակվել է ԱԿՎ պետական հրդեհային հսկողության տեսչության Տաշիրի հրշեջ մասի ավագ տեսուչ: 2004 թ. զբաղեցրել է ԱԿՎ Լոռու ԱԻ և ԶՊ մարզային վարչության Տաշիրի ՅՄ պետի պաշտոնը:

2006 թ. Լոռու մարզային փրկարարական վարչության Տաշիրի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարն է:

Գառնիկ Գալստյանը ծառայության ընթացքում բազմիցս արժանացել է խրախուսանքների:

Տաշիրի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարին ծննդյան օրվա առթիվ շնորհավորում է Լոռու մարզային փրկարարական վարչության ողջ անձնակազմը:

1-01 հրշեջ ծառայություն Զրդեհների մարումը կենցաղում

Անդրադառնալով կենցաղում առաջացող հրդեհները հանգցնելու առավել պարզ միջոցներին և եղանակներին, որոնք կարող են իրականացնել իրենք՝ բնակիչները, մինչև ստորաբաժանումների դեպքի վայր հասնելը:

Էլեկտրացանցի կարծ միացումից կամ ծանրաբեռնվածությունից բռնկված հրդեհները հանգցնելը

Հրդեհով բռնկված էլեկտրական հաղորդակները հանգցնելիս պետք է լինել շատ զգույշ, պահպանել անվտանգության բոլոր կանոնները, որովհետև այդ խառնաշփոթ վիճակում մարդը կարող է ընկնել լարման տակ, հոսանքահարվել և մահանալ:

Անհրաժեշտ է գիտենալ, որ առանց էլեկտրացանցը հոսանքազրկելու չի կարելի էլեկտրական լարերը ջրով հրդեհաչիջել, որովհետև ջուրը հաղորդիչ է, և եթե հոսանքը նախօրոք անջատված չէ, մարդը նրա միջոցով կարող է հոսանքահարվել: Հոսանքն անջատելու համար անհրաժեշտ է էլեկտրական վահանի վրայի ապահովիչները (հցանները) դեպի ծախս պտտացնել

լով հանել, հետո սկսել հրդեհաչիջման աշխատանքները:

Եթե հրդեհի մակերեսը փոքր է, կարելի է ջրով լի դույլում թրջել ավելը և հարվածելով կրակին, դադարեցնել այրումը: Եթե ավել չկա, նույն գործողությունը կարելի է կատարել դժվար այրվող բոլոր լարով, ծածկոցով և այլն: Եթե հրդեհը տարածվել է, ընդունել է 2-3 քառակուսի մետր և ավելի մակերես, ապա այն պետք է հանգցնել նրա վրա դույլով ջուրը շփելով: Այս դեպքում, եթե լրգարանում վանճա կա, պետք է ջրի ծորակը բացել, վանճան անընդհատ լցնել և դույլերով ջուրը արագ տեղափոխել հրդեհի վայր: Հրդեհաչիջման գործին պետք է մասնակցեն ընտանիքի բոլոր չափահաս անդամները և հարեւանները:

Եթե հաղորդակների նոր սկսվող հրդեհը հանգցվում է առաստաղի կամ պատի վրա, պետք է զգույշ լինել, որ կայծերը չընկնեն այրվող նյութերի և առարկաների վրա, չառաջացնեն հրդեհի օժանդակ օջախներ: Հասակին թափված կայծերը պետք է հանգցնել

տրորելով կամ թաց ավելով հարվածելով: Բնակիչներից շատերը տանը պահում են փողրակ ծաղկանոցը ջրելու կամ այլ կենցաղային նպատակների համար: Եթե բնակարանի հրդեհը ընդունել է միջին ծավալ, փողրակը կարելի է միացնել ջրի ծորակին (անընդհատ ջուր ստանալու համար), ուղղել առաջին հերթին կրակի տարածման ճանապարհին, աստիճանաբար շրջապատել և վերջնականապես հանգցնել այն:

Շատ դեպքերում բնակարանի հրդեհը հանգցնելիս առանձին մարդիկ ծուխը հեռացնելու համար բացում են սենյակի դուռը և լուսամուտը, որպեսզի հեշտացնեն իրենց գործողությունը: Ծխապատված գոտում հրդեհը հանգցնել դժվար է, սակայն չպետք է մոռանալ, որ դուռն ու լուսամուտը բացելով՝ արհեստականորեն ստեղծվում է թարմ օդի հոսք դեպի կրակի օջախ, որը միանգամից բորբոքում է այրման պրոցեսը և հրդեհը տարածվում, մեծ ծավալ է ընդունում: Չի կարելի մինչև հրշեջների տեղ հասնելը և առանց նրանց խորհրդի բացել վառվող սենյակի դուռն ու լուսամուտը: Այդ կոպիտ սխալից հրդեհը կտարածվի մի սենյակից և շենքի մեկ հարկից մյուսը՝ չափազանց դժվարացնելով դրա վերացումը:

Պորտ Ռոյալի կործանումը

Սողոմը միակ քաղաքը չէր, որ անհետացավ երկրի ընդերքում: Երեք հազար տարի անց նման բախտ վիճակվեց ծովահենների Բաբելոնին՝ Յամայկայի Պորտ Ռոյալ քաղաքին: Այն հայտնի ծովահեն Յենրի Մորգանի նստավայրն էր: Այն նույն Յենրի Մորգանը, որը 1671 թվականին իսպանական Պանամայի վրա հարձակվելու համար, շրթայված ուղարկվել էր Անգլիա: Սակայն այնտեղ, դատարանական որոշման փոխարեն, նրան ազնվականի տիտղոս էր սպասում, որը նրան շնորհել էր Կառլոս 2-րդը:

1674 թվականին սըր Յենրի Մորգանը վերադառնում է Յամայկա՝ արդեն որպես կղզու նահանգապետի տեղակալ: Իր պարտականությունները նա կատարում է մինչև 1688 թվականը, երբ հանգիստ մահանում է սեփական մահճում:

Ըստ ամենայնի, ցամաքի կտորը, որն արդյունքում ստացավ Պորտ Ռոյալ քեյ անվանումը («քեյ» նշանակում է մարջանի խութ), արդեն 1300 թվականին օգտագործում էին Յամայկայի բնիկները՝ ձկնորսները: Այստեղ, կղզու հարավարևելյան եզրին, մի ոչ մեծ ծովախորշ կա: Այստեղ է մտնում ավազի երկար ու նեղ լեզվակը՝ Պալիսադոն: 1655 թվականին կղզին անգլիացիների կողմից գրավվելուց հետո, կավե ժայռերի վրա քաշված ավազից ու տիղմից կազմված այս փոքրիկ կղզու անցք Քինգստոն քաղաքը՝ Յամայկայի մայրաքաղաքն ու գլխավոր նավահանգիստը:

Սակայն նավահանգիստը միշտ չէ Քինգստոնում եղել: Ավելի վաղ հիմնադրված բնակավայր էր Պորտ Ռոյալը, որը տեղակայված էր 13 կմ երկարությամբ ունեցող Պալիսադոնի հենց վերջում: Այս

տեղ հիանալի մի նավահանգիստ էր, որի նշանակությունը մեծապես աճեց 17-րդ դարում:

1658 թվականին կոմսդոր Սինգլը, որը Պորտ Ռոյալում հաստատված ծովահենների գլխավորն էր, գրոհով վերցնում է Կամպեյն քաղաքը Մեքսիկայում, ինչպես նաև Վենեսուելայի մի շարք քաղաքներ: Կողոպտված ավարը տեղափոխելով Յամայկայի իր ապաստարան, նա այդպիսով նախադեպ ստեղծեց, որն ամբողջապես ընդօրինակեցին մյուսները:

Այդ ընթացքում ծաղկող քաղաքի բնակչությունը հասավ 8 հազարի: Մի կեսը աֆրիկացիներ էին, մյուս կեսը՝ Ասիայից ու Եվրոպայից եկածներ, հիմնականում՝ անգլիացիներ: Թեև քաղաքը կառուցված էր ավազի վրա, քիչ չէին աղյուսե, քարե ու փայտե շենքերը, որոնցից շատերը նույնիսկ չորսհարկանի էին: Պորտ Ռոյալում նույնիսկ ամրոցներ եւ եկեղեցիներ կային, խոշոր նավահանգիստ՝ բազմաթիվ նավամատույցներով, 4 շուկա, սինագոգ, կաթոլիկ մատուռ, քվակերների աղոթատուն, հսկայական ամբարներ, զազանանոց, տանայակ պանդոկներ եւ ռազմական հրապարակ:

Ծովահենների հարստության հիմնական մասը հանգում էր քաղաքի առևտրականների սնունդներում, որոնք անխղճությամբ նրանց չէին զիջում: Սեյֆերն ու ամբարները լիքն էին ավարով. ոսկու եւ արծաթի կտորներ, ոսկերչական իրեր՝ անգին քարերով, շքեղ ու թանկարժեք կտորեղեն, եւ նույնիսկ սրբապատկերներ: Այս ողջ հարստությունը սպասում էր Անգլիա կամ մայրցամաքի այլ երկիր ուղեւորվելու, որտեղ կփոխանակվեր դրամի եւ այլ ապրանքների հետ:

Բայց փառքի գազաթնակետին Պորտ Ռոյալը հասավ հենց Յենրի Մորգանի օրոք, որը թալանեց Կա-

րիբյան ծովագերի բազմաթիվ իսպանական քաղաքներ: Իսպանիայի հետ մրցակցության պայմաններում, անգլիական կառավարությունը մտածված կերպով աջակցում էր «հաջողության ջենտլմեններին», որոնց հիմնական թիրախը հենց իսպանական նավերն էին:

Ծովահենների խառնվածքը որոշում էր քաղաքի կենսակերպը: Նրա բնակչությունը հայտնի էր որպես «ամենամահավատ ու ամե-

ղաքը տառապում էր կեսօրվա տոբից: Տոբն անհանգստացնում էր քաղաքացիներին, քանի որ ամեն տարի, նույն այս շոգ ու հանգիստ եղանակին էին ստորգետնյա ցնցումներ գրանցվում: Չնայած մարդիկ դրանց էլ էին սովորել, եւ թվում էր, թե նրանց կյանքի սովորական ռիթմը ոչինչ չէր կարող խախտել:

Նավահանգստում ալիքներից ծուլորեն տատանվում էին նավերը, դրանցից մի քանիսը բեռնա-



նաայլասերված»: Քաղաքում սովորական երեւոյթ էին օրգիաները, բռնություններն ու սպանությունները: Բուռն ծաղկում էին ապրում մոլեխաղերը, փողոցների երկարությունը ձգվում էին անհամար պանդոկներ, որտեղ ռոմի, ուտելիքի ու կանանց պակասություն չէր զգացվում:

Այդ պատճառով էլ շատերը 1662 թվականի հունիսի 7-ի աղետն ընկալեցին որպես Աստծո պատիժ: Երկինքն այդ օրն անամպ էր, Կարիբյան ծովը՝ հանդարտ: Արեւը զենիթում էր, եւ քա-

թափվում էին: Նավաստիները չուզեցին մաքրություն էին անում նավերի վրա: Փողոցներում շոգի պատճառով հատուկներ մարդկանց կարելի էր տեսնել:

Եվ հանկարծ մի պահ ամեն ինչ քարացավ: Ապա ծառերը ճկվեցին հզոր քամուց, սկսվեց հորդառատ անձրեւը, եւ ծովն ակնթարթոքն հայտնվեց ցամաքում: Երկիրը ցնցվեց, օրորվեց փայտե նավամատույցը: Սարերից հեռավոր ամպրոպի խուլ աղմուկն էր լսվում: Առաջին ցնցումին հետեւեց

երկրորդը, ապա երրորդը... Երկրաշարժի ժամանակ ժայռից նստված քային ապարների մի հսկայական զանգված ցած սահեց եւ, քաղաքի հետ միասին, սուզվեց ծովը: Մի քանի վայրկյանում Պորտ Ռոյալի ափի ամբողջ եզրերը հայտնվեց ջրի տակ: Ֆորտ Ջեյմսի ու Ֆորտ Կարլիսի հետքն անգամ չկար: Ականատեսների վկայությամբ, երկիրն ուռչում էր, բարձրանում, ցնցվում ու քանդվում էին շենքերը: Սկզբում անհանգիստ կանչում էին, իսկ հետո լռեցին սուրբ Պողոս եկեղեցու զանգերը:

Խոշոր ճեղքերը կլանում էին շենքերը եւ ահաբեկված մարդկանց: Փրկվածներից մեկը հետագայում պատմել է. «Երկիրը կարմրեց, ինչպես շիկացած փուռը: Երկիրն ալեկոծվում էր ծովի պես՝ ճաքճեղով եւ կուլ տալով մարդկանց: Սեղմում էր նրանց հողե աքցանների մեջ, դրանցից միայն գլուխներ էին երևում: Չեղելված գերեզմաններից դուրս ելած դիակները լողում էին աղետի զոհերի կողքին»:

Մի քանի րոպե անց ամեն ինչ ավարտվել էր: Աղետը 2 հազար մարդու կյանք խլեց, իսկ քաղաքն անհետացավ ծովի խորքերում: 1800 տուն սուզվեց Կարիբյան ծովի հատակը, եւ դեռ երկար ժամանակ երևում էր ափի մոտ՝ ոչ մեծ խորության վրա:

Շատերն աղետից հետո տեղափոխվեցին Քինգստոն: Բայց ողջ մնացածներից շատերը մնալու ավերված Պորտ Ռոյալում եւ սկսեցին վերակառուցել այն: Սակայն քաղաքին նոր արհավիրք էր սպասում՝ ժամտախտի համաճարակ, որը 3 հազար մարդու կյանք խլեց: Իսկ 1703 թվականին քաղաքը ոչնչացավ ուժեղ հորեղից: Յետագա տարիներին, մի քանի ուժեղ փոթորիկներ տիղմի հաստ շերտի տակ թաղեցին Պորտ Ռոյալի մնացորդները:

Արյունահոսություն



Առօրյա կյանքում շատ հաճախ են հանդիպում վնասվածքներ, որոնք ուղեկցվում են արյունահոսությամբ: Հաճախ արյունահոսությունները լինում են թույլ, հեշտ դադարեցվող եւ չեն պահանջում բժշկական միջամտություն: Բայց երբեմն արյունահոսության դադարեցման հասարակ քայլերի չիմացությունը մարդու կյանք է արժեցել:

Ի՞նչ պետք է իմանալ արյունահոսությունների մասին եւ ի՞նչ անել այդ դեպքում:

Չափահաս մարդու մեջ արյունը կազմում է մոտ 350-500 մլ: Մարդու մարմինն առանց հետագա բարդությունների կարող է կորցնել մինչեւ 10 տոկոս արյուն: Այս ծավալից ավելին կյանքի համար վտանգավոր է:

Արտաքին արյունահոսություն

Արտաքին արյունահոսությունն արյան արտահոսքն է մարմնից դուրս:

Արյունահոսություն ունեցող տուժածը սովորաբար լինում է տազնապած, անհանգիստ, իսկ մեծ քանակով արյան կորստի դեպքում տուժածը լինում է թույլ, ունենում է գլխապտույտ: Նրա անոթազարկն արագանում է, դժվար է շոշափվում, հաճախանում է

նաեւ շնչառությունը: Փոխվում են տուժածի մաշկի գույնն ու վիճակը՝ գունատվում է, դառնում սառը, կարող է կապտավուն երանգ ստանալ: Տուժածի տեսողությունը մթազում է, նա ուժեղ ծարավ է զգում:

Ի՞նչ անել

Արյունահոսության դեպքում արյան տեսքը շատերին խուճապի է մատնում, եւ վերքը թվում է ավելի սարսափելի, քան կա իրականում: Խուճապի մի՛ մատնվեք. վախն ու հուզմունքը վատ օգնականներ են: Հանգստացրեք նաեւ տուժածին, շեղեք նրա ուշադրությունը:

Ուժեղ արյունահոսությունը դադարեցնելու համար առաջին հերթին ուղղակի ճնշում գործադրեք՝ ձեռքի ափով սեղմեք վերքը: Վերքի վրա տեղադրեք ստերիլ անձեռոցիկ կամ մաքուր գործվածքի կտոր, օրինակ՝ արդուկած թաշկինակ: Եթե անձեռոցիկը ներծծվում է արյունով, նոր անձեռոցիկ տեղադրեք առաջինի վրա եւ լրացուցիչ ճնշում գործադրեք: Չի կարելի վերքի վրայից հեռացնել արյունով ներծծված անձեռոցիկը: Դա կերի մակարդակի պղկվելուն, եւ դադարած արյունահոսությունը կարող է վերսկսվել:

Վիրակապեք վերքը փաթույթային վիրակապով (բինտ): Վիրակապի ծայրն ամրացնելու համար վերջույթի շուրջը մեկ լրիվ պտույտ կատարեք եւ շարունակեք վիրակապել՝ ամեն փաթույթով ծածկելով մախորդի 2/3-ը: Ամրացրեք կամ հանգուցեք վիրակապի ծայրը:

Բարձրացրեք տուժածի վնասված մասը սրտի մակարդակից բարձր: Դա կնպաստի արյունահոսության նվազեցմանը:

Եթե արյունահոսությունը դեռ չի դադարել եւ վիրակապը ներծծվում է արյունով, ապա վերքի շրջանում տեղադրեք նոր անձեռոցիկ, բինտի գլանակ կամ այլ գործածեք եւ ճնշումով վիրակապեք: Այն ամրացրեք: Վիրակապը դնելուց հետո պարբերաբար ստուգեք արյան շրջանառությունը վիրակապից ներքեւ: Դրա համար սեղմեք եղունգը մինչեւ այն սպիտակի: Եթե եղունգը բաց թողնելուց հետո նրա գույնն արագ չի վերականգնվում, նշանակում է՝ վիրակապը չափից ավելի ծիգ է, եւ արյան շրջանառությունը խանգարված է: Արյան շրջանառության խանգարման մասին են վկայում նաեւ վիրակապված վերջույթում անոթազարկի բացակայությունը, մատների սառնությունը, մատները շարժելու անկարողությունը: Վիրակապված վերջույթի արյան շրջանառությունը միշտ համեմատեք առողջ կողմի հետ:

Արյունահոսությունը դադարեցնելու նպատակով կարելի է ճնշում գործադրել սեղմման կետերում:

Սեղմման կետերը մարմնի վրա որոշակի հատվածներ են, որտեղ հնարավոր է հիմնական սնուցող զարկերակը սեղմել ոսկրին դրանով իսկ մարմնի համապատասխան մասում խիստ նվազեցնելով արյունահոսությունը: Նկարում դուք տեսնում եք մի շարք սեղմման կետեր, որոնց վրա ճնշում գոր-

ծադրելով կարող եք համապատասխան մասում արյունահոսությունը դադարեցնել: Դրանք այն հատվածներն են, որտեղ շոշափում եք անոթազարկը:

Գլխի շրջանում արյունահոսության դեպքում կարող եք սեղմել քնային զարկերակը, սակայն հիշեք, որ չի կարելի 2 քնային զարկերակ սեղմել միաժամանակ:

Վերին վերջույթի արյունահոսության դեպքում սեղմելով բազկի միջին մասը՝ կարող եք փակել բազկային զարկերակը:

Ստորին վերջույթի ուժեղ արյունահոսության ժամանակ ածուկային մասում բռունցքով սեղմեք ազդրային զարկերակը:

Եթե տուժածը շատ արյուն է կորցրել կամ չէք կարողանում դադարեցնել արյունահոսությունը, ահազանգեք շտապօգնություն:

Վարակի կանխարգելումը

Արյունահոսության դադարեցման ընթացքում վարակի ներթափանցումը կանխելու նպատակով խուսափեք արյան հետ անմիջական շփումից, հազեք մանրէազերծ (ստերիլ) ձեռնոցներ կամ օգտագործեք այլ պաշտպանիչ միջոցներ՝ օրինակ պոլիէթիլենե տոպրակ: Եթե տուժածն ի վիճակի է, խնդրեք նրան, որ ինքը սեղմի վերքը: Այն սեղմեք մանրէազերծ անձեռոցիկով կամ ձեռքի տակ եղած որևէ մաքուր գործվածքով: Վերքը մշակելուց առաջ եւ հետո օճառով լվացեք ձեռքերը: Խուսափեք վերքին դիպելուց:



Եկեք բարի լինենք

Մ Բարություն... մի բառ, որն այսօր կորցրել է իր իսկական նշանակությունը: Թվում է, թե բարի լինելը այսօրվա կյանքի պահանջներին ոչ համապատասխան մի երեւոյթ է: «Բարի լինելը հիմարություն է», - այսպես են կարծում շատերը, քանի որ մարդիկ չեն կարողանում կյանքում հաջողության հասնել բարի լինելով: Այսինքն՝ հաջողության հասնելը զուգորդվում է եթե ոչ չարության, ապա՝ դաժանության հետ, քանի որ այլ կերպ հնարավոր չէ: Չարություն, դաժանություն, նախանձ եւ նման շատ այլ վատ բաներ կան մեր կյանքում, սակայն իրականում մեզանից յուրաքանչյուրն իր հոգու խորքում՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար, ցանկանում է, որ «աշխարհը լինի բարի»: Ուզում ենք, որ մեր դիմացինը լինի անկեղծ ու բարի, ուզում ենք հույսը դնել ոչ միայն մեզ վրա, այլև՝ ուրիշի, ուզում ենք նվիրվել առանց հետին մտքերի: Հարց է առաջանում՝ ի՞նչն է խնդիրը, որ մարդիկ իրենց բարությունը կյանքում չեն դրսևորում: Փորձենք հասկանալ այդ պատճառները եւ գտնենք դեպի իսկական՝ հոգու խորքից բխող, բարություն տանող ուղին:

Բարի լինելը դժվար է

Պատճառներից մեկն այն է, որ մենք կարծում ենք, թե մյուսները չար են, քանի որ ոչ միշտ են սիրալիկ ու բարեհամբույր մեզ հետ: Իրականում մարդկանց նման պահվածքն ավելի շատ պաշտպանական մեխանիզմ է կամ անաչկոտության հետևանք: Բավական է նայենք ինքներս մեզ հայելու մեջ եւ կհասկանանք, որ մենք էլ ենք դիմակ կրում միջավայրում: Մանուկ հասակում ծնողները մեզ սովորեցնում են սիրալիկ լինել դիմացինի նկատմամբ, լավ պահել օտար միջավայրում եւ այլն: Այդ ամենն արմատանում է մեր մեջ եւ շարունակում է արտահայտվել արդեն հասուն տարիքում: Բարի լինելու դժվարություններից է նաեւ այն, որ շատ հաճախ մենք ռիսկի ենք դիմում, երբ ուզում ենք մեկին օգնել, եւ արդյունքում մեզ սխալ են հասկանում: Լինում են դեպքեր, որ մեր բարությունը չարաշահում են, եւ մենք հայտնվում ենք հիմար իրավիճակում:

Ներքին ընտրություն

Հոգեվերլուծության տեսանկյունից մարդու համար ավելի հեշտ է չար լինել, քան՝ բարի: Չարությունը տազնապի եւ հիասթափության մասին է վկայում: Մենք վախենում ենք, որ դիմացինը կնկատի մեր խոցե-

լի լինելը: Չար մարդիկ իրականում ոչ բավարարված են եւ ոչ էլ գոհ են իրենց կյանքից: Բացասական հույզերի միջոցով նրանք ազատվում են իրենց ներքին անբավարար վիճակից: Չարությունը բավական «ծանր» է նստում անձի վրա, քանի որ իրականում քայքայում է մարդու հոգեկան ռեսուրսները: Իսկ բարությունը, ընդհակառակը, ներքին ուժի եւ ներդաշնակության ցուցանիշ է: Բարի լինելու համար առաջին հերթին պետք է մարդը կապ հաստատի ինքն իր հետ, իր «ես»-ի հետ: Չար մարդը հեռացել է իրենից: Եթե մարդն ունի ոչ բավարար ինքնազնա-հատական, ինքնահարգանք, ապա նա չի կարող բարի լինել: Այդ իսկ պատճառով ինքնավերլուծությունը, սեփական անձին մոտ լինելը դեպի բարություն տանող ուղիներից մեկն է:

Կենսաբանական օրենք

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդն ընդունակ է հասկանալ դիմացինին (ենպաթիա ցուցաբերել) արդեն ծնված օրվանից, քանի որ երբ նորածինը լսում է այլ երեխայի լացը, ինքն էլ է սկսում լաց լինել: Էնպաթիան մեզ անհրաժեշտ է մեր գոյության համար, այդ իսկ պատճառով բնությունը մեզ պարզեցել է այդ հատկությունը: Ինչու այն երկար չի պահպանվում: Այստեղ մեծ է ծնողների եւ դաստիարակչության դերը: Երբ երեխան սկսում է նմանակել ծնողներին, բարի է լինում, եթե ծնողները բարի են, եւ չար՝ եթե նրանք էլ են չար: Հուզական պաշտպանվածությունը, ֆիզիկական եւ հոգեկան բարվոքությունը մանկության տարիքում երեխայի մեջ բարություն են գարգացնում: Երբ ընտանիքում, դասարանում չկան շատ սիրելիներ կամ մերժվածներ, եւ բոլորին միանման են սիրում, երեխաները բարի են մեծանում:

Վարժություն. «Լինենք Բարի»

Եկեք խոստովանենք, որ կյանքը կարող է ավելի լավ լինել ինչպես մեզ համար, այնպես էլ ուրիշների: Եկեք այսօրվանից սկսենք ի սրտե բարի լինել: Այստեղ ներկայացված են մի շարք գործողություններ, որոնք ձեզանից յուրաքանչյուրը կարող է իրականացնել: Դուք կարող եք ինքներդ էլ գտնել ձեր տարբերակները.

- Չանգահարեք ձեր ընկերուհուն կամ ընկերոջը, որին երկար ժամանակ չեք հանդիպել
- Ձեզ համար ոչ պետքական իրերը, խաղալիքները հավաքեք եւ նվիրեք ման-

կատանը, կամ ձեր շրջապատում գտնող մարդկանց, ովքեր դրա կարիքն ունեն

- Սիրալիկ եղեք երթուղայինի վարորդի հետ
- Հանդիպեք ձեր մտերիմներին
- Այցելեք ձեր տատիկին, պապիկին, որոնց վաղուց չեք տեսել

Բարության նախապայմանները

Փիլիսոփա եւ հոգեբան Պիեռ Ֆերուչին նշում է, որ բարությունն ունի տարբեր սահմաններ

- **Էնպաթիա.** Երբ փորձում ես իսկապես հասկանալ, թե ինչ է կատարվում քո բարկացած ընկերոջ հետ: Նրան ագրեսիվ կերպով պատասխանելու փոխարեն, մենք կարող ենք իրականում նրա հետ հանգիստ խոսել



- **Համակերպում.** սեփական անձը, ընտանիքը, ընկերական շրջապատը գովերգելու փոխարեն, ավելի լավ է ցուցաբերել համեստություն եւ իսկապես լսել, թե դիմացինն ինչ է ուզում ձեզ ասել

- **Համբերություն.** փորձեք համբերատար լինել բոլոր իրավիճակներում
- **Մեծահոգություն**
- **Հարգանք դիմացինի նկատմամբ.** հարգեք ձեր գրուցակցին, եթե նույնիսկ ձեր հայացքները տարբեր են: Առանց հարգանքի բարությունը մակերեսային է:
- **Հավատարմություն.** հավատարիմ եղեք ձեզ եւ ձեր խոսքին
- **Երախտագիտություն.**
- **Շնորհակալ եղեք, որ դուք առողջ եք, որ ձեր հարազատները ձեր կողքին են, որ դուք ունեք այն, ինչ հիմա ունեք**

Չարության բնույթը

Մեզ հաճախ թվում է, թե մեզ շրջապատում են չար, տհաճ, մեզ վնասել ցանկացող մարդիկ: Սակայն եթե ուշադիր ուսումնասիրեք ձեր հարաբերությունները, ապա կտեսնեք, որ դրանք իրականում չեզոք հարաբերություններ են եւ բավական հաճելի:

Բոլորիս կյանքում էլ լինում են դեպքեր, երբ մենք դառնում ենք չար: Օրինակ՝ դեռահասության տարիքում դաժանության նկատմամբ հակվածությունը ինքնահաստատման միջոց է: Որպեսզի այդ բացասական շրջանն արագ եւ հեշտ հաղթահարվի, անհրաժեշտ է, որ դեռահասն իրեն ապահով զգա եւ չվախենա ապագայից: Եթե չկա հեռանկար, հավատ ապագայի նկատմամբ, ապա երեխայի մեջ չարությունը եւ դաժանությունը կարող են բնավորության գիծ դառնալ: Քանի որ նա պետք է պայքարի իր գոյության համար՝ դաժանությունը դառնում է օրինաչափ:

Բարությունը վարակիչ է

Մեզանից յուրաքանչյուրն իրականում ուզում է լինել բարի եւ նույն վերաբերմունքն էլ սպասում է դիմացինից: Ինչքան էլ չարությունը շատ է մեր կյանքում, եթե ուշադիր նայենք, ապա կտեսնենք, որ բարությունն էլ է շատ: Ընկերական հարաբերություններ, բարեգործական ծրագրեր, ստեղծվում են կազմակերպություններ, որոնք հոգ են տանում անօթեւան մարդկանց, կենդանիների մասին, ապահովում են սննդով, հագուստով, բնակության վայրով եւ այլն: Թվարկածները դեռ շատ քիչ են՝ մեր կյանքում բարություն իսկապես կա, պարզապես պետք է այն նկատել: Ինչքան բարությունը շատ լինի մեր կյանքում, այնքան կշահենք բոլորս:


Մեզանից յուրաքանչյուրի մեջ էլ կա բարություն: Բավական է մի փոքրիկ բարի ժեստ, հաճոյախոսություն անել, ժպտալ ավտոբուսի վարորդին, օգնել տատիկին անցնել փողոցը եւ այլն: Ագրեսիային ագրեսիայով մի պատասխանեք, բղավոցին էլ՝ բղավոցով, քանի որ բոլորս էլ մարդ ենք ու կարիք ունենք ջերմ եւ բարի հարաբերությունների:

Բարի եղեք, քանի որ բարությունն անհրաժեշտ է եւ այն պետք է շատացնել:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Երեխաների համար

Ահազանգում



Ի՞նչ պետք է անել, երբ դեպք է պատահել, կա տուժած մարդ, իսկ դուք մեկն եք:

Բարձրաձայն օգնություն կանչեք: Եթե

Արագ արձագանքման ծառայություններ

- Հրշեջ-փրկարար ծառայություն - 1-01
- Ոստիկանություն - 1-02
- Շտապ օգնություն - 1-03
- Գազի վթարի դեպքում - 1-04
- Կենցաղային վթարների դեպքում - 1-08 (Երեւան)

ձեզ արձագանքեն՝ ապա խնդրեք, որ ահազանգեն համապատասխան ծառայություն: Եթե ոչ ոք օգնության չի գալիս, ուրեմն ինքներդ պետք է ահազանգեք եւ արագ վերադառնաք տուժածի մոտ:

Հիշեք, հարկավոր է հնարավորինս շտապ ահազանգել, եթե տուժածը.

- անգիտակից է,
- ունի շնչառության խանգարումներ,
- նշում է ցավեր կրծքավանդակում կամ որովայնում,
- չի շոշափվում անոթազարկը (պուլսը),
- ունի արյունային փսխում,
- թունավորված է,

- ունի ուժեղ նոպայածեւ գլխացավեր,
 - ունի կոտրվածքներ եւ այլն:
- Հեռախոսով ահազանգելիս պետք է հերթապահին հաղորդել.**
- ի՞նչ է պատահել,
 - դեպքի վայրի հասցեն (փողոցը, շենքի համարը, հարկը, բնակարանը),
 - տուժածների թիվը, անունը, ազգանունը, տարիքը,
 - տուժածների վիճակը,
 - ցուցաբերած առաջին օգնությունը,
 - ո՞ր հեռախոսահամարից է կատարվում զանգը, զանգահարողի անունը, ազգանունը:



Թերաթեքություն, թե՛ գեղեցկության ձգտում

- Երկար տարիներ ցանկացել են դիմել պլաստիկ վիրահատության՝ քիթս վիրահատելու համար, բայց մեջք ուժ չէի գտնում: Վերջապես 20 տարեկանում որոշեցի վիրահատվել՝ քիթս վիրահատելն ինձ համար դարձել էր կյանքի նպատակ, - ասում է 20-ամյա Մարիաննան: - Քիթս կոր էր, իսկ միջնապատն ուղղելուց հետո ունեցա հարթ եւ ինչպես ընդունված է ասել՝ «շաբլոն» քիթ, բայց դա ինձ այդքան էլ չի հուզում, կարելի էր ինձ առավել վստահ եմ զգում:



- Փորձը ցույց է տալիս, որ վերջին մի քանի տարիների ընթացքում զգալիորեն շատացել են քիթ եւ ականջների պլաստիկ վիրահատության դեպքերը: Դա եւ կապում են ինֆորմացիայի հոսքի հետ: Մեր ժողովուրդը զնալով տեղեկացված է դառնում, եւ դա էլ բերում է հետաքրքրության ու որեւէ հայտնի մարդու նմանվելու ցանկության, - ասում է Մխիթար Չերացու անվան բժշկական համալսարանի պլաստիկ վիրաբուժության անբիոնի վարիչ, բժշկական գիտությունների թեկնածու՝ պրոֆեսոր Արտավազ Սահակյանը: - Քիչ չեն դեպքերը, երբ գործ ենք ունենում հոգեբանական խանգարում ունեցող մարդկանց հետ: Այս հետևանքով շատ կարեւորում են ցուցումների ճիշտ ընտրությունը: Այդ նպատակով էլ համագործակցում ենք հոգեբանների հետ: Հոգեբանի հետ զրույցը լինում է վիրահատությունից եւ առաջ, եւ հետո: Լինում են դեպքեր, երբ հիվանդը գոհ չի մնում վիրահատությունից:

Նական բարդություններ, մնում է դժգոհ... Այս դեպքում անհրաժեշտ է հոգեբանի խորհրդատվություն, - վստահեցնում է վիրաբույժը: - Պլաստիկ վիրահատության դեպքում անձն ինքն է որոշում՝ դիմե՞լ վիրահատության, թե՛ ոչ: Եվ այս դեպքում շատ կարեւոր է պարզել պատճառները: Դրանցից մեկն այն է, որ պլաստիկ վիրահատության դիմողների մեծամասնությունն ունի անվստահության զգացում, բայց կատարելով արտաքին փոփոխություն, միտնույն է, անվստահությունը վերադառնում է՝ դա ներքին անվստահություն է, որը պայմանավորված չէ արտաքին տեսքով: Սրա հետեւանքով վիրահատությունից որոշ ժամանակ անց, վիրահատության դիմած անձին թվում է, թե ինչ-որ բերություններ են առկա, - փաստում է ԵՊԲԳ ասիստենտ, հոգեբան Տաթևիկ Առաքելյանը:

Քթի, շրթունքի, կոպերի, կնճիռների ձգման եւ այլ պլաստիկ վիրահատություններից առաջ վիրահատվողը նկարահանվում է տարբեր դիրքերից, կատարվում է մոդելավորում: Ապա նրան ցուցադրվում են մի քանի ձեւեր, որոնցից ընտրվում է ցանկալին: Հաշվի է առնվում դիմողի ցանկությունը. նա է ընտրում նաեւ ցավազրկման տեսակը: Վիրահատությունը կատարվում է վիրահատվողի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո: Երբեմն առաջանում են հետվիրահատական այտուցներ, դժվարաշնչություն, որոնք, սովորաբար, ֆիզիոթերապիայի միջոցառումներից հետո անցնում են, սակայն չի բացառվում կրկնակի վիրահատության միջամտումը՝ զանազան փոքր թերությունները շտկելու նպատակով: Ըստ ամերիկացի ուսումնասիրողների, պլաստիկ վիրահատության կատարել ցանկացողների 30 տոկոսից ավելին ունեն հոգեբանական որոշակի խանգարումներ, թերաթեքության զգացում: Տաթևիկ Առաքելյանն ասում է, որ պլաստիկ վիրահատության դիմողների շատ քիչ տոկոսն է դիմում հոգեբանի խորհրդատվության, իսկ դա գալիս է հոգեբանի մասնագիտության մասին ունեցած թյուր կարծիքից, մեծ է նաեւ վիրաբույժի մեղավորությունը: - Երբ բժիշկը տեսնում է, որ անհատը շահագրգռված է կատարել պլաստիկ վիրահատություն, նա, որոշակի մասնագիտական քայլեր ձեռնարկելով, կատարում է վիրահատությունը՝ անտեսելով այն փաստը, որ դիմողը հոգեբանական տեսանկյունից լուծելի խնդիրներ ունի: Օրինակ, հոգեբանի հետ զրույցից հետո հնարավոր է, որ դիմողը հրաժարվի վիրահատությունից: Մենք նրանց բացատրում ենք, որ արտաքին գեղեցկությունը

ներկայանալու ձեւից է կախված, եւ եթե կա ներքին անվստահություն, վիրահատությունից հետո էլ մարդը չի կարող վստահ զգալ, - ասում է Տ. Առաքելյանը: Վիրաբույժ Սահակյանը տեղեկացնում է, որ գոյություն ունի երկու տեսակի պլաստիկ վիրահատություն՝ գեղազիտական, եսթետիկ, երբ ուղղակի որոշ շտկումներ են արվում արտաքինում եւ բնածին արատի կամ հիվանդության հետեւանքների վերացման նպատակով արվող պլաստիկ վիրահատություն: - Ամուսինս քսան տարի է տառապում է բազալոմա կոչվող հիվանդությամբ: 20 տարի պայքարելով հիվանդության դեմ՝ տասնմեկ ամսան վիրահատվել է եւ՝ անարդյունք. հիվանդությունը նորից կրկնվել է: Երեք տարի ամուսինս դեմքի վրա մեծ բացված անցք ուներ, ուռուցքաբանը խորհուրդ տվեց դիմել պլաստիկ վիրահատության: Թեեւ ամուսինս 57 տարեկան է, բայց որոշեց դիմել վիրահատության՝ դեմքին առաջացած անցքը փակելու համար, - ասում է Ջավենի կինը: - Մարդու համար դեմքն առաջին հերթին ներկայանալու միջոց է, եւ եթե կա հնարավորություն որեւէ կերպ վերականգնելու այն, նա ամեն դեպքում կփորձի: Մարդու տարիքը կապ չունի, Ջավենի ձախ ծնողը եւ աջ ծնուտի կեսը հեռացված են, եւ նա դիմել է պլաստիկ վիրահատության վերացնելու առաջացած անցքը, - բացատրում է հոգեբանը: Հոգեբանը դրական է վերաբերվում միայն պարտադիր պլաստիկ վիրահատությանը: Նա խորհուրդ է տալիս սիրել սեփական «Ես»-ը, որովհետեւ հենց սիրո պակասն է թերաթեքության զգացում առաջացնում:

Աճի Դանիելյան
ԵՊԳ Ժուռնալիստիկայի ֆակ., 4-րդ կուրս

Ամերիկացիները չորս ակը փոխարինում են երկուսով

ԱՄՆ-ն աշխարհում հայտնի է ավտոմեքենաների հանդեպ անսահման սիրով: Բայց վերջին մի քանի տարիներից շատ քաղաքներում կտրուկ ավելացել է նրանց թիվը, ովքեր չորսակնանի տրանսպորտը փոխարինում են երկուսով: Պատճառը պարզ է՝ մարդիկ ուզում են էկոլոգիապես անվտանգ, առողջության համար օգտակար եւ էժան տրանսպորտ ունենալ:

Ժրագրի ղեկավարը, ասում է, որ իր նպատակն է ԱՄՆ-ի մայրաքաղաքը հեծանվորդների համար ամենահարմար քաղաքը դարձնել: «Սա էկոլոգիապես մաքուր, առողջության համար օգտակար ու արդյունավետ տրանսպորտի տեսակ է: Մարդիկ ուզում են, որ այն զարգանա: Այս տրանսպորտը մարդկանց գրավում է, որ քաղաք զան ու մնան», - կարծում է Ջիմ Սեբաստիանը:

պատվությունը տվել են հեծանվորդին՝ 2000 թ. 1.6 տոկոսի փոխարեն: Այս թիվը հավանաբար աճել է վերջին երկու տարիների ընթացքում: Հեծանվորդների օգագործման աճին զուգահեռ վիճակագրությունը ֆիքսում է ճանապարհներից հեծանվորդների մասնակացության միջադեպերի նվազում: Այդպես, Վաշինգտոնում 2005 թ. մահացել էր երեք հեծանվորդ, իսկ 2009 թ.՝ ոչ մեկը: Այնուամենայնիվ, չնայած հեծանվորդների աջակցման ծրագրի զարգացմանը, ԱՄՆ-ը դեռ չի կարող այդ հարցում մրցակցել Եվրոպայի հետ: Օրինակ, Կոպենհագենում բնակիչների մոտ 30 տոկոսը աշխատանքի կամ դպրոց է գնում հեծանվորով:



ամերիկյան մեքենաշինության հայրենիքը, կորցրեց իր բնակիչների մոտ կեսը՝ 1950 թ. համեմատ, իսկ դրա արվարձաններն անընդհատ աճում էին:

Միացյալ Նահանգները հսկա տարածությունների երկիր է՝ պրեմիայի, շոգ անապատի եւ սառած տունդրայի տասնյակ չքնակեցված կիլոմետրերով: Քաղաքներն աճել են հասնելով աներեւակայելի չափերի, եւ հենց այդ պատճառով էլ երկրում երկար ժամանակ առաջնային տեղ էին տալիս ավտոտրանսպորտին: ԱՄՆ-ում ընդհանրապես շատ քիչ քաղաքներում կարելի է առանց մեքենայի յուլ գնալ: Շատ քաղաքներում էլ հասարակական տրանսպորտ գոյություն չունի: Սակայն վերջին տարիներին՝ նավթի ներմուծման, բենզինի բարձր գների, գլոբալ տաքացման ու ճարպակալման համաճարակի հետ կապված մտահոգությունների ֆոնին, ամերիկյան մի շարք քաղաքների իշխանություններ միջոցներ են ձեռնարկում հեծանվորդ երթուղիները պրոպագանդելու համար:

«Կանաչ» մայրաքաղաքը
Վերջին տարիներին ԱՄՆ-ի մայրաքաղաքի ճանապարհներին հեծանվորդների համար նշաններ ու լուսացույցներ են հայտնվել:
Հեծանվորդների թիվը ԱՄՆ-ի քաղաքներում.
Պորտլենդ՝ բնակիչների 5,96%-ը
Սինեատպոլիս՝ բնակիչների 4,27%-ը
Սիեթլ՝ բնակիչների 2,94%-ը
Սակրամենտո՝ բնակիչների 2,72%-ը
Սան-Ֆրանցիսկո՝ բնակիչների 2,72%-ը
Վաշինգտոն՝ բնակիչների 2,33%-ը
Օքլենդ՝ բնակիչների 2,15%-ը
Տոլոնո՝ բնակիչների 2,04%-ը
Լիբուերթլեյթ՝ բնակիչների 1,75%-ը
ԱՄՆ-ում ընդհանուր բնակիչների թվի 0,55%-ը

«Ավտոմոբիլային կախվածության» պարմությունը
Բանն այն է, որ դանիական մայրաքաղաքում տասնամյակներ շարունակ հեծանվորդների աջակցման ծրագրի է անցկացվել, մինչդեռ ԱՄՆ-ը պետք է հաղթահարի ավտոարդյունաբերության շահերի հարյուրամյա լրիմզի հետեւանքները: - Ամերիկյան տնտեսության հսկայական շարժիչը կախված էր մեքենաների տարածումից, - ասում է պրոֆեսոր Օուեն Գուտֆորդը՝ «XX դարի անկանոն կառուցապատումը. մայրուղիներն ու Ամերիկայի լանդշաֆտի փոփոխությունը» գրքի հեղինակը: 1920-ականներից սկսած քաղաքների մախագոծողները դրոմ էին բնակիչներին հեռանալ մեգապոլիսների կենտրոններից եւ բնակվել ծայրամասերում՝ ստեղծելով մոր արվարձաններ: Տները, դպրոցներն ու գրասենյակները չափազանց հեռու էին հեծանվոր հասնելու համար: 1970-ականներին շատ քաղաքների կենտրոններ դատարկվեցին՝ բնակչությունն արվարձաններում էր ապրում: Դետրոյտը՝

Շատ քաղաքներում հույս ունեն, որ հեծանվային ուղիներն ու կայանատեղիները եւ հեծանվի վարձակալման քաղաքային ծրագրերն ավելացնելով կարելի է նվազեցնել մեքենաների հոսքը, փոքրացնել կախվածությունը հասարակական տրանսպորտից եւ բարելավել քաղաքացիների առողջությունը: Այս նորարարությունների արժեքը համեմատաբար մեծ չէ: Ջիմ Սեբաստիանը՝ հեծանվորդների ու անցորդների աջակցման վաշինգտոնյան



արտակարգ ժամանց

«Նարամիտ» հանցագործները

Քարտրուսության զոհը

Բրազիլիայում հնարամիտ կոդողատիչները գտել են հրագեներ անցկատ ձեռով բանկ անցկացնելու եղանակը: Օրերից մի օր բանկի անվտանգության աշխատակցին է մոտենում փոքրիկ երեխան գրկին մի կին եւ խնդրում թույլ տալ օգտվելու տեղի զուգարանից: Դռնապանը, ելնելով ամենամարդասիրական զգացումներից, երիտասարդ կնոջը թողնում է ներս: Նրան նույնիսկ մետաղորսիչ սարքով չեն ստուգում: Ինչպես հետագայում պարզվում է՝ շատ իզուր: Մանկական ծածկոցի մեջ փաթաթված էր ոչ միայն երեխան, այլև մի ողջ զինանոց: Կինը զենքերը փոխանցում է տղամարդկանց զուգարանում իրեն սպասող հանցակիցներին: Արդյունքում կողոպտիչները բարեհաջող կերպով բանկից մի քանի

հազար դոլար կանխիկ գումար են գողանում:

Բրազիլիայի ոստիկանությունը շփոթության մեջ է: Նախկինում ոչ ոք չէր կարողացել այդքան հեշտությամբ խաբել անվտանգության աշխատակիցներին:

Նյարդերը չդիմացան

Վիեննայի բանկերից մեկը մի կողոպտիչ է ներխուժում եւ, զենքով սպառնալով, գումար պահանջում: Գյուլտեր Բաունը (այդպես էր կողոպտիչի անունը) բոլորովին հաշվի չէր առել այն հանգամանքը, որ բանկը գտնվում էր ոստիկանության բաժանմունքի եւ հատուկ նշանակության ջոկատի շտաբի անմիջական հարեւանությամբ: Հաշված վայրկյանների ընթացքում շենքը շրջապատում են ոստիկանության ավտոմեքենաներն ու

զինված դիմակավոր մարդիկ, իսկ հարեւան շենքերի տանիքներին դիրքավորվում են դիպուկահարները: Գյուլտերը պատանդ է վերցնում բանկի երեք աշխատակցի ու մի հաճախորդի եւ «ամրանում» բանկի առաջին հարկում: Շուրջ հինգ ժամ տևած «պաշարման» ընթացքում նա ոչ միայն բանակցում էր ոստիկանների հետ, այլև հասցնում էր պատասխանել բանկի հաճախորդների հեռախոսազանգերին, նրանց ծանոթացնում առաջարկվող ծառայությունների պայմաններին եւ վարկեր առաջարկում: Առայժմ հայտնի չէ, թե ինչն էր նրան դրդում անել դա, սակայն, վերջիվերջո, Գյուլտերի նյարդերը տեղի են տալիս եւ բարկացած ու կաշուն հաճախորդների հետ հեռախոսագրույցները դրդում են նրան հանձնվել ոստիկաններին:

Իտալացի Ռոբին Յուդը

Իտալիայում հոգեւոր հայրերը «մատնել են» բանկը թալանած եւ այդ փողերը եկեղեցուն նվիրաբերած մի նորահայտ Ռոբին Յուդի: Նա Կալյարիի բանկից գողացել էր շուրջ 12 հազար եվրո, իսկ հետո գնացել էր եկեղեցի եւ փողով լի պարկը հանձնել քահանային: Չնայած բարեգործը հասցնում է փախչել, հայր Ֆրանչեսկոն տեղի ունեցածի մասին հայտնում է իրավապահ մարմիններին: Եկեղեցի եկած ոստիկաններն անմիջապես գլխի են ընկնում, որ դրանք գողացված փողեր են, քանի որ բանկից արդեն հայտնել էին գողացված թղթադրամների սերիաները:

Ռոբին Յուդն առայժմ գտնվում է ազատության մեջ:

Նարամիտը

Առեւտրի կրպակներում աշխատելու համար որոշակի տվյալներ ու հմտություններ են անհրաժեշտ: Միանգամից ասենք, որ խոսքը արտաքին գրավիչ տվյալների մասին չէ, այլ մտքի ճկունության եւ հնարամտության, որոնք հաճախ շատ ավելի օգտակար կարող են լինել, քան առաջինը:

Ռուսաստանի քաղաքներից մեկում դանակով զինված հանցագործը ձեռքը մտցնում է այդպիսի



կրպակներից մեկի պատուհանից ներս եւ սիրունատես վաճառողուհուց գումար պահանջում: Աղջիկն իրեն չի կորցնում եւ ծանր, մետաղե պատուհանափեղկն իջեցնում է ներքեւ: Այդպիսով կողոպտիչն այլևս չի կարողանում ձեռքը հետ քաշել եւ հայտնվում է ծուղակի մեջ: Այդ ընթացքում աղջիկը հասցնում է վազել փողոց եւ կանչել ոստիկաններին: Արագորեն դեպքի վայր ժամանած ոստիկաններն առանց որևէ դժվարության ձեռքակալում են բավական անհանգիստ կերպով իրենց «սպասող» հանցագործին:

Ձախողակը

Կալիֆոռնիայում 17-ամյա մի պատանի որոշում է գողություն անել: Այդ նպատակով նա տանիքից թափանցում է տեղի կազմակերպություններից մեկի գրասենյակ: Կախովի առաստաղը փլվում է, եւ նա ընկնում է հատակին: Փորձելով նույն ճանապարհով դուրս գալ այնտեղից՝ երիտասարդը ու-



թը դնում է վազարանի վրա եւ... Այն նույնպես չդիմանալով նրա քաշին՝ կոտրվում է: Երբ վերջապես տղային հաջողվում է բարձրանալ վեր եւ կախովի առաստաղի վրայով սողալ դեպի հարեւան գրասենյակ, այնտեղի առաստաղը նույնպես փլվում է: Այս անգամ ընկնելով գետնին՝ նա վնասում է ոտքը: Սա դեռ բավական չէր, հեռանալիս վայրկյանում պատահաբար սեղմում է ոստիկաններին կանչող կոճակը, որոնք շտապ հասնելով դեպքի վայր՝ ձերբակալում են նրան:

Անուղղելի հիմարություն

Կանադական Պիտերբորո քաղաքի բնակիչ Ջերալդ Դիկսոնը դատարանից ներում ստացավ այն բանից հետո, երբ նրա դատապաշտպանը որպես մեղմացուցիչ հանգամանք մշեց իր հաճախորդի անուղղելի հիմարությունը: Փաստաբանը ելույթ ունեցավ հետեւյալ տեքստով. «Իմ հաճախորդին չի կարելի խելացի համարել: Երբ նա որոշեց թալանել Ուիլբրիում գտնվող՝ Մոնրեալի բանկի մասնաճյուղը, նրա մտքով չէր էլ անցնում, որ օգոստոս ամսին դահուկային սաղավարտ գնելը կտապավորվի վաճառողի մոտ, ինչպես նաեւ կտապավորվի այն փաստը, որ գնորդը հագել է սաղավարտ անմիջապես՝ հենց խանութում: Ցանկացած մարդ էլ կգուշակեր՝ եթե վաճառողը լսի, որ ինչ-որ մեկը բանկ է թալանել դահուկային սաղավարտով, կհայտնի այդ մասին ոստիկանությանը, որն էլ իր հերթին խանութի տեսախցիկներով կճանաչի հանցագործին: Բայց, հարգելի դատավոր, Դիկսոնի հիմարությունն այդքանով չի սահմանափակվել: Թալանից մի քանի ժամ հետո նա վերադարձել է նույն բանկ ու ցանկացել է հաշիվ բացել: Հարցին, թե որքան գումար է ուզում իր հաշվին դնել, Դիկսոնը աշխատողին է մեկնել հենց այն պայուսակը, որի մեջ մի քանի ժամ առաջ գանձապահը 2600 դոլար էր դրել, ու ասել է. «2600 դոլար, տիկին»:

Դատարանը համաձայնում է փաստաբանի հետ:



Լսողության օրգան	Կրծքի կենդանի	Քիմիկատ	Սի, երկյուղ	Նրան ճանաչում են	Կիսամութ	Կիսամութ
Բելմոնտի դերերից Ֆիլիպի հաջորդը	Արվարձանի ծննդի վիզ	Ռոստովա Յրեշ, դեւ	Կիսաջրի կոշոր բնակավայր	Պեպսի ... Գլխանոցի տեսակ	Մեքսիկոյի եւ Ուրբաթին	Աբելի եղբայրը
Կտուր, ձեղուն	Գիշատիչ թռչուն	Ֆաջորդում է ուրբաթին	Դ՞նչ է կազաչուկը ... Կուտանյան	Լավի հակառակը Դերասան ... Կապուր	Բու, տնօրեն	Խուրձ, կապոց
... եւ Գոմոր	ճար	Ի՞նչ է կազաչուկը ... Կուտանյան	Քրոջ ամուսինը	Հասակավոր Հայկական կերակուր	Մոնդոլ խան	Այլընտրանք
Չենարան, պաշտպան	Գեր, պարարտ	Մոնդոլ խան	Ալբանիայի մայրաքաղաքը	... Լոլոբրիցիոյա ... կարմիր կտրել	Սորթ գլխարկ	Օրենք, կարգ
Սորթ գլխարկ	Գոմշակով Ենդ պողոտա	Սորթ գլխարկ	Սորթ գլխարկ	Սորթ գլխարկ	Սորթ գլխարկ	Սորթ գլխարկ
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում
Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի տիտղոս Արեւելի երկրներում	Սիպետի		